ԱՆՁԻ ՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Էդգար Կարապետյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների տարատեսակ են համարվում սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները: Հանցագործությունների նշված խումբը տեսության մեջ ընդունված է անվանել «եռական հանցագործություններ»[1]: ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխի 138-142 հոդվածներում նախատեսված են սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցատեսակները: Դրանք հինգն են՝ բռնաբարությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելը, սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ և անառակաբարո գործողությունները: Արևմտյան իրավունքում, մասնավորապես ԱՄՆ օրենսդրությամբ սեռական հանցագործություններ են բնորոշվում սեռական բռնության ցանկացած տեսակ, սեռական հարաբերություններ կամ վարք, որը տեղի է ունենում առանց տուժողի հստակ համաձայնության: Սեռական բռնության սահմանման մեջ ներառվում են բռնի սեռական հարաբերությունները, բռնի սոդոմիան, անառակաբարո արարքները երեխաների նկատմամբ, անզգայացումը (հարբեցնելը, անօգնական վիճակի մեջ դնելը և այդ վիճակն օգտագործելով՝ սեռական հարաբերությունը), այլ սեռական բռնությունը և բռնաբարության փորձը[2]:

Քրեական իրավունքի խորհրդային, ռուսական և հայրենական տեսությունը սեռական հանցագործությունների հասկացության և տեսակների այլ բնութագիր է տալիս: Այսպես՝ Յա. Մ. Յակովլևը սեռական հանցագործությունները բնորոշել է որպես քրեական օրենքով նախատեսված հանրության համար վտանգավոր այնպիսի արարքներ, որոնք ոտնձգում են հասարակության մեջ ձևավորված սեռական կենսակերպին բնորոշ սեռական հարաբերություններին և հանդիսանում են սուբյեկտի կամ այլ անձի կողմից սեռական պահանջները բավարարելու նպատակով դիտավորությամբ կատարված սեքսուալ բնույթի գործողություններ՝ խախտելով տուժողի սեռական իրավունքները կամ տարբեր սեռի անձանց միջև ձևավորված, նման կենսակերպի համար բնական սեռական հարաբերությունները[3]: Ա.Ն. Իգնատովը, քննադատելով սեռական հանցագործությունների նման բնորոշումը, նշում է, որ այդ սահմանումը բացառում է ոչ սեքսուալ, օրինակ՝ վրեժի շարժառիթով կատարված,

---

[1] Տե՛ս օր.՝ **Антонян Ю. М., Ткаченко А. А., Шостакович К. В.** Криминальная сексология. Под ред. Ю.М. Антоняна. - М.: Спарк, 1999.
[2] https://www.justice.gov/ovw/sexual-assault
[3] Տե՛ս **Яковлев Я. М.** Половые преступления. Душанбе, 1969, էջ 64:

հանրության համար վտանգավոր արարքների ճանաչումը որպես սեռական հանցագործություն: Նա նշում է նաև, որ բռնի արվամոլության և լեսբոսության քրեականացումից հետո ճիշտ չէ այն մոտեցումը, որ սեռական հանցագործությունները ոտնձգում են տարբեր սեռի անձանց միջև տեղի ունեցող սեռական հարաբերությունների դեմ[1]: Վ.Պ. Ռեպինը սեռական հանցագործությունները բնորոշում է որպես դիտավորյալ արարքներ, որոնք ոտնձգում են անչափահասների և մանկահասակների սեռական անձեռնմխելիության, ֆիզիկական և բարոյահոգեբանական բնականոն զարգացման, ինչպես նաև մեծահասակների սեռական ազատության՝ քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների դեմ[2]: Ա. Վ. Կորնևան նշում է, որ սեռական հանցագործությունների տեսակային (խմբային) օբյեկտ է հասարակական հարաբերությունների ամբողջական համակցությունը, որն ապահովում է անձի սեռական անձեռնմխելիությունն ու սեռական ազատությունը[3]: Վ.Ն. Կուդրյավցևը սեռական հանցագործությունների մասին խոսելիս նշում է, որ հույժ կարևոր է հանցագործությունների այս խմբի օբյեկտի ճիշտ բնորոշումը, ինչը թույլ կտա վեր հանել դրանց սոցիալ-քաղաքական էությունը, այն հիմնական բարիքը, որոնց դեմ ոտնձգում են այս բնույթի հանցագործությունները: Քանի որ սեռական հարաբերությունները սեռական պահանջմունքների բավարարմանը միտված հասարակական հարաբերություններն են, հեղինակը կարծում է, որ սեռական հանցագործությունների հիմնական օբյեկտը անձանց սեռական շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են[4]:

Մեր կարծիքով, նշված տեսակետը բավականաչափ խոցելի է, քանզի անչափահասների սեռական անձեռնմխելության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները անտեսվում են, և նրանց դեմ ուղղված սեռական ոտնձգությունները դուրս են մնում քննարկման համատեքստից:

Տ.Վ. Կոնդրաշովան նշում է, որ սեռական դելիկտների ներքո պետք է հասկանալ քրեական օրենքով սահմանված հանրավտանգ այն արարքները, որոնք ենթադրում են տուժողի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու դիտավորությամբ սեռական բնույթի գործողությունների կատարում՝ բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով[5]:

Տեսական գրականությունում առկա է մոտեցում այն մասին, որ ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածով (անառակաբարո գործողություններ) նախատեսված հանցագործության հիմնական օբյեկտը երեխաների ֆիզիկական ու բարոյական զարգացումն է: Իսկ անձի սեռական ազատությունը և սեռական անձեռնմխելիությունը չեն ընդգրկվել հիմնական կամ լրացուցիչ օբյեկտում: Վերոշարադրյալը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ քր. օր.-ի 18-րդ գլխում տեղ գտած հանցագործությունների տեսակային օբյեկտն ավելի լայն է, քան այն նշված է այդ գլխի վերնագրում: Այդ հանցագործությունների տեսակային օբյեկտ են անձը և սեռական բարոյականութ-

---

[1] Տե՛ս **Игнатов А.Н.** Квалификация половых преступлений. М., 1974, էջ 6:

[2] Տե՛ս **Репин В.П.** Уголовное право России. Особенная часть: учебник / В.П. Репин. – Юстицинформ, 2010. – С. 331.

[3] Տե՛ս **Корнева А.В.** Уголовное право Российской Федерации. Особенная часть.

[4] Տե՛ս **Кудрявцев В.Н.** Объективная сторона преступления. - М.: Госюриздат, 1960, էջ 79:

[5] Տե՛ս **Кондрашова Т.В.** Уголовная ответственность за понуждение к действиям сексуального характера // Юридический мир, 1999, № 3.

յան կանոնների վրա հիմնված սեռական հարաբերությունների կենսակարգը[1]:

Ընդհանուր առմամբ համաձայն լինելով նշված մոտեցմանը՝ հարկ է փաստել, որ նշված հանցագործության օբյեկտի առումով, մեր կարծիքով, դրսևորվել է չափազանց ընդարձակ մեկնաբանություն՝ դրանում ներառելով նաև անձին: Այս պարագայում կարծես տարբերություն չի դրվում հանցագործության օբյեկտի և առարկայի միջև, ինչը կարող է տարամեկնաբանությունների տեղիք տալ:

Քննարկվող հանցագործությունների օբյեկտի ճիշտ որոշումը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն և կարող է մեծապես նպաստել հանցագործությունների ճիշտ որակմանը և համանման հանցատեսակներից սեռական հանցագործությունների տարբերակմանը: Այսպես՝ ՀՀ քր. օր. հոդված 132-ի (Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը) չորրորդ մասում նշվում է, որ սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը: Այստեղ, ինչպես տեսնում ենք, ևս խոսքը այլ անձի սեռական շահագործման մասին է, որը ենթադրում է նաև բռնություն գործադրելով սեռական բնույթի տարբեր գործողությունների կատարում, սակայն այս պարագայում գործ ունենք ոչ թե սեռական հանցագործության, այլ անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցանքի հետ, իսկ անձի սեռական անձեռնմխելիության և ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները համարվում են քննարկվող հանցագործության լրացուցիչ օբյեկտ:

Յուրաքանչյուր հասարակության գոյության և զարգացման համար կարևոր են բնականոն սեռական հարաբերությունները: Որպես այդ հարաբերությունների անհրաժեշտ տարրեր հանդես են գալիս՝ տարբեր սեռի ներկայացուցիչները, հարաբերությունների կամավոր բնույթը, մասնակիցների սեռական հասունությունը, նրանց միջև մոտ ազգակցական կապերի բացակայությունը, բնական սեռական հարաբերությունները և այլն: Ն.Ա. Օզովան նշում է, որ սեռական նորմալ հարաբերությունները ենթադրում են՝ 1) տարասեռություն, 2) սեռական հասունություն, 3) փոխադարձ համաձայնություն, 4) հաճույք ստանալու փոխադարձ ձգտում, 5) առողջությանը պատճառված վնասի բացակայություն, 6) այլ անձանց կամ հասարակությանը պատճառված վնասի բացակայություն[2]:

Յուրաքանչյուր հասարակություն ընտրում է գոյություն ունեցող սեռական վարքագծի որոշակ՝ բարոյապես ընդունելի տեսակներ՝ մերժելով դրա այլ դրսևորումները: Սեռական վարքագծի ընդունելի նորմերը կարելի է համարել տվյալ հասարակության սեռական մշակույթ[3]:

Բնականաբար՝ քննարկվող հարաբերությունների ոչ բոլոր տարրերն են առնված քրեաիրավական պաշտպանության ներքո: Օրինակ՝ այժմ, ի տարբերություն խորհրդային ժամանակաշրջանի, համասեռամոլությունը հանցագործություն չէ, եթե

---

[1] Տե՛ս **Ղամբարյան Ա., Թումասյան Դ.** Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար): Երևան, 2015, էջ 18:

[2] Տե՛ս **Озова Н.А.** Насильственные действия сексуального характера. - М., 2006, էջ 143.

[3] Տե՛ս **Мусатов Д.** Предупреждение сексуальной эксплуатации и растления малолетних и несовершеннолетних в современной России // «Черные дыры» в Российском Законодательстве. 2007. № 5. - С. 265, 266:

իհարկե այն ունի կամավոր բնույթ և կապված չէ որոշակի տարիքի չհասած անձանց նկատմամբ կատարվող սեռական բնույթի գործողությունների հետ: Քրեաիրավական հարաբերությունների ոլորտից դուրս են նաև մոտ ազգակցական կապեր ունեցող անձանց միջև սեռական հարաբերությունները, չնայած դրանք կարող են խիստ բացասական ազդեցություն ունենալ սերունդների համար՝ առաջացնելով բազմաթիվ գենետիկ հիվանդություններ և շեղումներ: Սրանով է պայմնավորված ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխի վերտառության ընտրությունը՝ «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ»: Ակներև է, որ սեռական հանցագործությունների առումով քրեաիրավական պաշտպանության ներքո են գտնվում բացառապես անձի սեռական անձեռնմխելիությունը և ազատությունը, իսկ սեռական կյանքի այլ ոլորտները կարգավորվում են հասարակական և սեռական բարոյականության նորմերով:

Այս հանցագործությունների տեսակային օբյեկտը անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Որպես անմիջական օբյեկտ հանդես է գալիս կոնկրետ անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունը[1]: Ա. Ե. Յակուբովն առաջարկում է սեռական որոշ հանցագործությունների դեպքում օբյեկտ դիտարկել տուժողի պատիվն ու արժանապատվությունը: Մասնավորապես՝ ըստ նրա, այս օբյեկտի դեմ են ոտնձգում այն դեպքում, երբ հանցանքն իրականացվում է ոչ թե սեռական կարիքները բավարարելու, այլ այդ միջոցով անձին նվաստացնելու, պախարակելու, արատավորելու նպատակով[2]:

Սակայն կարելի է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր պնդում են, որ նման մանրամասնումն ավելորդ է, քանի որ բազմաթիվ հանցագործություններ (և ոչ միայն սեռական) ոտնձգում են տուժողի պատվի ու արժանապատվության դեմ[3]:

Սեռական ազատությունը ինքնուրույն, սեփական կամքով իր զուգընկերոջը և սեռական կրքերի բավարարման կոնկրետ ձևերը ընտրելու մարդու իրավունքն է: Այս իմաստով որևէ մեկն իրավասու չէ պարտադրել նշված հարցերի սեփական լուծումը մեկ ուրիշին: Սեռական ազատությամբ օժտված են որոշակի տարիքի հասած (ֆիզիկապես և հոգեպես հասունացած) և մեղսունակ անձինք:

Սեռական անձեռնմխելիությունը մարդու իրավունքն է՝ զերծ մնալ սեռական հարաբերությունների ոլորտ ներքաշվելուց: Մասնավորապես, մինչև տասնվեց տարեկանները օժտված չեն սեռական ազատությամբ, և նրանց շահերը քրեական օրենքով պաշտպանվում են այլ անձանց կողմից կատարվող սեռական ոտնձգություններից[4]:

ՀՀ Սահմանադրության հոդված 25-ի առաջին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Սեռական անձեռնմխելիության իրավունքը ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի անքակտելի տարր է: Միևնույն ժամանակ սեռական ազատության իրավունքը օրգանապես կապված է սեռական անձեռնմխելիության իրավունքի հետ, և եթե

---

[1] Տե՛ս **Корнева А.В.** Преступления против половой неприкосновенности и половой свободы личности/ Уголовное право РФ. Особенная часть. М.,1996. С 80.

[2] Տե՛ս Курс уголовного права. Том 3. Особенная часть/ Под ред. Г.Н. Борзенкова, В.С. Комиссарова. М., 2002, էջ 227:

[3] Տե՛ս Уголовное право. Том 2. Особенная часть/ Отв. ред. И.А. Подройкина, Е.В. Серегина, С.И. Ульзеко. М., Юрайт, 2012, էջ 149:

[4] Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 223:

խախտվում է անձի սեռական անձեռնմխելիության իրավունքը, ապա դա միշտ հանգեցնում է նաև սեռական ազատության իրավունքի խախտման:

Քննարկվող հանրավտանգ արարքները, բացի հիմնական անմիջական օբյեկտից, կարող են վնաս պատճառել նաև մի շարք այլ անմիջական օբյեկտների, ինչպիսիք են անձի կյանքի, ինչպես նաև ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները և այլն: Այս հանցագործություններից տուժողներ կարող են լինել ինչպես արական, այնպես էլ իգական սեռի ներկայացուցիչները (ՀՀ քրեական օրենսդրության ներկա իրավակարգավորմամբ բռնաբարությունից տուժող կարող է լինել միայն իգական սեռի ներկայացուցիչը, սակայն, մեր կարծիքով, օրենսդրական հետագա զարգացումները կհանգեցնեն այս մոտեցման վերանայմանը)[1], անչափահասները և մանկահասակները: Որպես տուժող կարող են հադես գալ թե՛ գործունակ և թե՛ անգործունակ անձինք: Այսպես՝ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունները անմեղսունակ անձի նկատմամբ պետք է քննարկվեն ՀՀ քր. օր. հոդվածներ 138-ի կամ 139-ի շրջանակներում՝ որպես տուժողի անօգնական վիճակն օգտագործելով կատարված բռնաբարություն կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ: Քրեական օրենսդրությունը ընդհանուր առմամբ առավել խիստ պատասխնատվություն է սահմանում այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են անչափահասների նկատմամբ, իսկ որոշ դեպքերում այն դիտվում է որպես ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք (ՀՀ քր. օր. հոդվածներ 138-ի երկրորդ մասի երրորդ կետ, երրորդ մասի երկրորդ կետ, 139-ի երկրորդ մասի երրորդ կետ, երրորդ մասի երկրորդ կետ, 140-ի երկրորդ մաս):

ՄԱԿ-ի 1990 թվականի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի առաջին հոդվածի համաձայն՝ սույն կոնվենցիայի նպատակների համար երեխա է համարվում 18 տարեկան չդարձած յուրաքանչյուր մարդկային էակ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ[2]: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը վերաբերում է երեխային և ոչ թե անչափահասին: Այս առումով հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսդրությունում առկա է եզրութաբանական շփոթ, և հանցակազմերի մի մասում խոսվում է երեխայի (օր.՝ ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված մի շարք հանցատեսակների պարագայում (հոդվածներ 166, 166.1 և այլն), մեկ այլ դեպքում անչափահասի մասին, սակայն երկու իրավիճակում էլ խոսքը 18 տարին չլրացած անձանց մասին է: Մեր կարծիքով՝ իրավաբանական տեխնիկայի և օրենսդրության միասնական տրամաբանության ապահովման նկատառումներով ՀՀ քրեական օրենսգրքում պետք է կիրառվի բացառապես «երեխա» եզրույթը, ինչը համահունչ կլինի նաև միջազգային իրավակարգավորումներին:

Անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների առավել բարձր հանրային վտանգավորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս հանցանքների կատարմամբ կոպտորեն ոտնահարվում են անչափահասների սեռական անձեռնմխելիության իրավունքը, նման հանցանքի կատարումը նրանց վրա ունենում է այլասերող ազդեցցություն, կարող է պայմանավորել սեռական հարաբերությունների ոլորտ վերջիններիս վաղաժամ ներթափանցումը, ինչն էլ իր հերթին հղի է ամենավտանգավոր հետևանքներով անչափահասների ֆիզիկական և

---

[1] ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերը միավորվել են:

[2] «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1990 թվականի սեպտմբերի 2-ին, ՀՀ-ում ուժի մեջ է մտել 1993 թ. հունիսի 22-ին:

հոգեկան առողջության առումով: Նման իրավիճակը հակասում է թե՛ բնության օրենքներին և թե՛ հասարակական բարոյականության կանոններին:

Բոլոր սեռական հանցագործությունների օբյեկտիվ կողմի ընդհանրությունը դրսևորվում է այնպիսի արարքների կատարմամբ, որոնք անձի սեռական շահերի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ են: Տեսության մեջ կարծիք է հայտնվել, որ նշված հանցագործությունների օբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ակտիվ գործողություններով, որոնք վնասում են մարդու օրինական սեռական շահերը (օրինակ՝ բռնաբարության դեպքում) կամ սպառնում են այդ շահերին վնաս պատճառել (օրինակ՝ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելու դեպքում)[1]:

Ընդհանուր առմամբ ճիշտ է այս մոտեցումը, սակայն, մեր կարծիքով, կարող է ունենալ բացառություններ հատկապես անչափահասների դեմ ուղղված այնպիսի սեռական հանցագործության առումով, ինչպիսի են անառակաբարո գործողությունները: Օր.՝ տասնութ տարին լրացած անձը դիտում է պոռնկագրական տեսարաններ պարունակող տեսաֆիլմ, և այդ պահին ներս է մտնում տասը տարեկան երեխա: Վերջինս չի անջատում ֆիլմը կամ չի փոխում հեռուստացույցի ալիքը, չնայած պարտավոր է դա կատարել, և փաստորեն անգործությամբ թույլ է տալիս, որ մանկահասակը դիտի այդ ֆիլմը, ինչը կարող է համարվել մտավոր անառակաբարո արարքի կատարում: Այս առումով առաջարկում ենք վերանավանել «անառակաբարո գործողությունների» հանցակազմը և ձևակերպել այն որպես «անառակաբարո արարք»: Հարկ է նկատել, որ համանման մոտեցում է դրսևորվել նոր քրեական օրենսգրքի նախագծի 193-րդ հոդվածում: Կարծում ենք՝ այս մոտեցումը լիովին արդարացված է և կարող է լրացնել օրենսդրական բացը և նպաստել այս հանցատեսակի որակման հետ կապված տեսական և գործնական հիմնախնդիրների լուծմանը:

Ըստ օրենսդրական նկարագրման եղանակի՝ սեռական հանցագործությունները նախատեսված են ձևական հանցակազմերով: Ա.Վ. Կորնեևան նշում է, որ բոլոր սեռական հանցագործություններն ունեն ձևական հանցակազմ, բացի բռնաբարության որակյալ տեսակներից[2]: Համանման դիրքորոշում ունի նաև Ա. Վ. Աղաֆոնովը, ով նշում է, որ սեռական հանցագործությունների հիմնական հանցակազմերը ձևական են[3]:

Մեր կարծիքով՝ այս մոտեցումները որոշակի շտկման կարիք ունեն: Նախ հարկ է նկատել, որ ձևական հանցակազմով են նկարագրված նաև բռնաբարության գրեթե բոլոր որակյալ տեսակները (ՀՀ քր. օր. հոդված 138-ի երկրորդ մասի առաջինից ութերորդ կետերը, բացառությամբ չորրորդ կետի, ինչպես նաև նույն հոդվածի երրորդ մասն ամբողջությամբ): Բացի այդ՝ նյութական հանցակազմով է նախատեսված ոչ միայն բռնաբարության, այլև սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմի երկրորդ մասի չորրորդ կետը: Բնականաբար վերոնշյալ հեղինակների կարծիքներն առնչվում են ՌԴ քրեական օրենսդրությանը (հոդվածներ 131-135), սակայն մեր բերած փաստարկները, կարծում ենք, արդարացված են թե՛ ՀՀ և թե՛ ՌԴ օրենսդրության համատեքստում:

Նյութական հանցակազմով նախատեսված սեռական հանցագործությունների

---

[1] Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), էջ 225:

[2] Տե՛ս **Корнеева А.В.** Теория квалификации преступлений: учебное пособие для магистрантов. М., 2015, էջ 41:

[3] Տե՛ս Агафонов А.В. Половые преступления. М., 2009, էջ 115:

ծանրացնող հանգամանքները ճիշտ որակելու համար անհրաժեշտ է պարզել իրական պատճառական կապի առկայությունը կատարված սեռական հանցագործության և առաջացած վտանգավոր հետևանքների (օր.՝ տուժողին անզգուշությամբ մահ պատճառելու) միջև:

Սեռական հանցագործությունները սուբյեկտիվ կողմից դրսևորվում են բացառապես ուղղակի դիտավորությամբ: ՀՀ քր. օր հոդվածներ 138-ի և 139-ի չորրորդ մասով նախատեսված հետևանքների նկատմամբ կարող է դրսևորվել միայն անզգույշ մեղք, այսինքն՝ այս պարագայում խոսքը մեղքի՝ երկու ձևով կատարվող հանցագործությունների մասին է: Սեռական հանցագործությունների շարժառիթները կամ նպատակները օրենսդրորեն ամրագրված չեն, սակայն դեպքերի գերակշիռ մասում դրանք ունեն սեռական կրքերի բավարարման ուղղվածություն: Ասվածն ի-հարկե չի բացառում նաև այլ շարժառիթներով սեռական հանցագործությունների կատարումը, ինչպես օրինակ՝ վրեժի, խանդի, ամուսնության դրդելու, որոշակի աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելուն հարկադրելու, խուլիգանական, շահադիտական և այլն:

Տեսական գրականության մեջ նշվում է, որ երեխաների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների առավել տարածված շարժառիթներն են՝ սեռական լարվածության վերացումը, հեշտանքի հասնելը, ենթարկելը, ստորացնելը, հետաքրքրությունը, զվարճանալը, նմանակումը, հատուցումը, ինքնահաստատումը և այլն[1]:

Քննարկվող հանցատեսակների սուբյեկտը նախքան հանցանքը կատարելը օրենքով սահմանված որոշակի տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձն է: Հարկ է նկատել, որ սեռական հանցագործությունների սուբյեկտի միասնական բնութագիր տալն անհնար է, քանզի դա պայմանավորված է յուրաքանչյուր հանցակազմի օրենսդրական կառուցվածքով: Տարբեր են սեռական հանցագործությունների թե՛ սուբյեկտների տարիքը, թե՛ սեռային կազմը (օր.՝ բռնաբարության սուբյեկտ կարող է համարվել բացառապես արական սեռի ներկայացուցիչը): Հետևաբար՝ հանցագործության սուբյեկտի հիմնախնդիրը պետք է առանձին և հանգամանալից քննարկել յուրաքանչյուր սեռական հանցագործության ուսումնասիրության ընթացքում: Հարկ է փաստել նաև, որ գրեթե բոլոր սեռական հանցագործությունների սուբյեկտը հատուկ է: Բացառություն է, թերևս, ՀՀ քր. օր. հովդած 140-ով նախատեսված արարքը (սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը), չնայած այս պարագայում ևս հարցը միանշանակ չի լուծվում, քանզի այն դեպքերում, երբ քննարկվող հանցագործությունը կատարվում է տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, ապա, մեր կարծիքով, գործ ունենք հանցագործության հատուկ սուբյեկտի հետ:

Սեռական անձեռնմխելության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները կարող են դասակարգվել ըստ տարբեր հիմքերի: Հանցագործությունների ցանկացած խմբի, այդ թվում՝ սեռական հանցագործությունների դասակարգումը թույլ է տալիս համակարգել գիտելիքները տվյալ խնդրո առարկայի վերաբերյալ, գնահատել քննարկվող հանցագործությունների օբյեկտի քրեաիրավական պաշտպանության բազմակողմանիությունը, ամբողջականությունը և համաչափությունը, ինչպես նաև կանխորոշել այս հանցատեսակների հետագա տեսական և գործնական ուսումնասիրության ուղղություններն ու հիմնախնդիրները[2]:

---

[1] Տե՛ս **Набойщиков Н.П.** Актуальные проблемы предупреждения действий сексуального характера, совершаемых в отношении несовершеннолетних. СПб., 2006, էջ 91:

[2] Տե՛ս **Гаухман Л.Д.** Объект преступления: Лекция. М., 1992, էջ 14:

Տեսական գրականության մեջ առաջ են քաշվել սեռական հանցագործությունների դասակարգման մի շարք հիմքեր, որոնք թույլ են տալիս առանձնացնել այս հանցատեսակների առանձին խմբեր և տեսակներ: Հարկ է փաստել, որ իրավական դոկտրինայում սեռական հանցագործությունների դասակարգման միասնական մոտեցում գոյություն չունի:

Այսպես՝ Ս. Ի. Նիկուլինն առաջարկում է հետևյալ դասակարգումը՝

- գործողություններ, որոնք ուղեկցվում են բացահայտ սեռական բռնությամբ,
- սեռական բարոյականության կոպիտ խախտումներով ուղեկցվող գործողություններ, որոնք չափահաս անձանց կողմից իրականացվում են 16 տարին չլրացած անձանց նկատմամբ[1]:

Նշված դասակարգումն անթերի համարվել չի կարող, քանզի այստեղ խոսվում է բացահայտ սեռական բռնության մասին, մինչդեռ որոշ բռնի սեռական հանցագործությունների դեպքում բռնությունը կարող է գործադրվել այլ անձանց նկատմամբ և չկրել սեռական բնույթ:

Պ. Ի. Լյուբլինսկին իր աշխատությունում առանձնացնում է սեռական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների յոթ առանձին տեսակներ՝

1. ամուսնության սահմանված կարգի խախտմանն առնչվող հանցագործություններ,
2. որոշակի անձանց սեռական անձեռնմխելության դեմ ուղղված հանցագործություններ,
3. մանկահասակների և պատանիների առողջ ու բնականոն սեռական զարգացման դեմ ուղղված հանցագործություններ,
4. հանցագործություններ, որոնք կապված են սեռական այլասերման հետ,
5. պոռնկության քրեականացումը,
6. այլ անձանց այլասերմանը նպաստելը,
7. սեռական հարաբերությունների սահմանափակումը եվգենիկական նկատառումներով[2]:

Հարկ է նկատել, որ այս դեպքում հեղինակը դասակարգել է իր ժամանակաշրջանի օրենսդրությամբ սահմանված սեռական հարաբերությունների ոլորտին առնչվող հանցագործությունները և ոչ թե սեռական հանցագործությունները՝ այժմյան իմաստով:

Բավականաչափ ինքնատիպ դասակարգում են առաջարկում Ն. Գ. Իգնատովը և Յու. Ի. Լյապունովը՝ դասակարգման հիմքում դնելով արարքի կատարման ձևի առանձնահատկությունները: Ըստ այդմ սեռական հանցագործությունները բաժանվել են չորս խմբի՝

1. սեռական հարաբերություններ, որոնք ուղեկցվում են բնական սեռական ակտով (բռնաբարություն),
2. սեռական հարաբերություններ, որոնք չեն ուղեկցվում բնական սեռական ակտով (բռնաբարություն չեն համարվում),
3. անառակաբարո գործողություններ, որոնք ունեն իրենց ուրույն առանձնահատկությունները,
4. ունիվերսալ հատկություններ ունեցող արարքներ, ինչպես օրինակ՝ սեռա-

---

[1] Տե՛ս Уголовное право России. Части Общая и Особенная/ Под ред. А.И. Рарога. М., Проспект, 2008, էջ 335:

[2] Տե՛ս **Люблинский П.И.** Преступления в области половых отношений / П.И. Люблинский. – М., 1925, էջ 27:

կան հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը[1]:

Հազիվ թե նման դասակարգումը կարելի է հաջողված համարել: Բնական սեռական հարաբերությամբ ուղեկցվող հանցագործությունների խմբին կարելի է դասել ոչ միայն բռնաբարությունները, այլև ՀՀ քր. օր.-ի 140-րդ և 141-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունները:

Պետք է նշել, որ հեղինակների մեծ մասը սեռական հանցագործությունները դասակարգում են՝ ելնելով դրանց անմիջական օբյեկտից: Այսպես, Ա. Վ. Կորնեևան և մի շարք այլ հեղինակներ սեռական հանցագործությունները բաժանել են երկու խմբի՝

1. չափահաս անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձգություններ՝ բռնաբարություն, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը.

2. անչափահասի սեռական ազատության, սեռական անձեռնմխելիության, բարոյական և ֆիզիկական առողջության դեմ ուղղված ոտնձգություններ՝ սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ և անառակաբարո գործողությունները[2]:

Պրոֆեսոր Ա. Ա. Պիոնտկովսկու կարծիքով, բոլոր սեռական հանցագործությունները կարելի է բաժանել երեք խմբի՝

1. սեռական հանցագործություններ, որոնց անմիջական օբյեկտը արբունքի հասած անձանց սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են,

2. սեռական հանցագործություններ, որոնց անմիջական օբյեկտը անչափահասների բնականոն սեռական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են,

3. այլ սեռական հանցագործություններ[3]:

Մեր կարծիքով՝ սեռական հանցագործությունները ըստ հանցագործության անմիջական օբյեկտի դասակարգելը բավականաչափ խրթին է: Բանն այն է, որ թե՛ բռնաբարության, թե՛ սեռական բնույթի բռնի գործողությունների և թե՛ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է անչափահասի նկատմամաբ կատարելը (հոդվածներ 138 և 139-ի երկրորդ մասի երրորդ կետ, երրորդ մասի առաջին և երկրորդ կետեր, հոդված 140-ի երկրորդ մաս), և հազիվ թե կարելի է պնդել, որ այս դեպքում խոսքը անչափահասի սեռական ազատության և անձեռնմխելիության, բարոյական և ֆիզիկական առողջության դեմ ուղղված հանցանքների մասին չէ:

Տ. Վ. Կոնդրաշովան և Ի. Յա. Կոզաչենկոն առաջարկում են ըստ հանցանքի կատարման եղանակի սեռական հանցագործությունները տարանջատել բռնի և ոչ բռնի սեռական հանցագործությունների[4]:

---

[1] Տե՛ս **Игнатов А.Н.** Квалификация половых преступлений / А.Н. Игнатов. – М.: Юрид. литература. – 1974, էջ 6:

[2] Курс уголовного права. Особенная часть. Том 3/ Под ред. Г.Н Борзенкова, В.С. Комиссарова. М., 2002, էջ 258:

[3] Տե՛ս **Пионтковский А.А., Меньшагин В.Д.** Курс советского уголовного права. Особенная часть. Том 1. - М.: Госюриздат, 1955, էջ 627:

[4] Տե՛ս **Козаченко И.Я.** Уголовное право. Особенная часть: учебник / И.Я. Козаченко, Г.П. Новоселов. – М.: Норма, 2008, էջ 455:

Կարծում ենք՝ այս մոտեցմանը կարելի է համաձայնել, քանզի, մեր կարծիքով ևս, միակ հստակ չափանիշը, որը թույլ է տալիս սեռական հանցագործությունները հստակորեն դասակարգելու, հանցանքի կատարման եղանակն է: Բռնությամբ զուգորդված սեռական հանագործություններն աչքի են ընկնում առավել մեծ հանրային վտանգավորությամբ, իսկ հանցանքի կատարման եղանակը աներկբայորեն վկայում է այնպիսի լրացուցիչ օբյեկտերին վնաս պատճառելու իրական սպառնալիքի մասին, ինչպիսիք են անձի կյանքի և առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Կարծում ենք՝ վերոշարադրյալ դասակարգումներից յուրաքանչյուրը, իր դրական և բացասական կողմերով հանդերձ, իրավունք ունի գոյություն ունենալ և կարող է նպաստել սեռական հանցագործությունների էության առավել համակողմանի բացահայտմանը:

Հարկ է նկատել նաև, որ անչափահասների դեմ ուղղված սեռական ոտնձգությունները համարվում են առավել վտանգավոր սեռական հանցագործություններ, սակայն մեր քրեական օրենսդրության մեջ դրանք առանձնացված չեն առանձին գլխով: Հանրավտանգ այս արարքները կա՛մ համարվում են սեռական հանցագործությունների որակյալ տեսակներ, կա՛մ էլ առանձնացված են առանձին հոդվածներով: Մեր կարծիքով, ելնելով անչափահասների դեմ ուղղված սեռական հանցագործությունների մի շարք առանձնահատկություններից և առավել բարձր հանրային վտանգավորությունից՝ առավել նպատակահարմար կլիներ ՀՀ քրեական օրենսգրքում դրանք նախատեսել առանձին գլխով և սահմանել ավելի խիստ պատիժներ հանցագործությունների այս տեսակների համար կամ էլ հանցագործությունների այս խումբը տեղակայել ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում («Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները»): Առանձին գլխով սահմանելու պարագայում առաջարկում ենք հետևյալ վերտառությունը՝ Գլուխ… «Երեխայի դեմ ուղղված սեռական հանցագործությունները»:

Պետք է փաստել, որ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները անձի դեմ ուղղված առավել վտանգավոր հանցատեսակներ են, որոնց դեմ անզիջում պայքարը ցանկացած պետության առաջնահերթություններից է:

Վերոգրյալի հիման վրա կարելի է տալ սեռական հացագործությունների հետևյալ բնորոշումը. «Սեռական հանցագործությունները սուբյեկտի կողմից սեփական կամ այլ անձանց սեռական պահանջմունքները բավարարելու կամ այլ շարժառիթներով կատարվող անձի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանրավտանգ արարքներ են, որոնք կոպտորեն ոտնահարում են հասարակական բարոյականության նորմերը, խոչընդոտում են անչափահասների և մանկահասակների բնականոն սեռական զարգացումը և խախտում են անձանց միջև սեռական շփումների ձևավորված հարաբերությունները»:

ПОНЯТИЕ И КЛАССИФИКАЦИЯ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ПОЛОВОЙ НЕПРИКОСНОВЕННОСТИ И ПОЛОВОЙ СВОБОДЫ ЛИЧНОСТИ

Эдгар Карапетян
Соискатель кафедры уголовного права ЕГУ

Статья посвящена изучению понятия и видов преступлений против половой неприкосновенности и половой свободы личности. Преступления против половой неприкосновенности и половой свободы личности представляют собой одну из наиболее опасных форм антисоциального поведения, и данный тезис не требует особых доказательств. В статье проанализированы толкования понятия половых преступлений в различных доктринальных источниках, на основании которых автор предлагает собственный подход к этой проблеме. Изучены также различные классификации половых преступлений, которые могут значительным образом повлиять на правильную квалификацию данных видов преступлений.

DEFINITION AND TYPES OF CRIMES AGAINST SEXUAL INVIOLABILITY AND SEXUAL FREEDOM OF THE PERSON

Edgar Karapetyan
PhD student of the YSU Chair of Criminal Law

The article is devoted to the study of the definition and types of crimes against the sexual inviolability and sexual freedom of the individual. Crimes against the sexual inviolability and sexual freedom of the person are one of the most dangerous forms of antisocial behavior, and this thesis does not require special evidence. In the article analyzing the interpretation of the drfinition of sexual crimes in various doctrinal sources on the basis of which the author offers his own approach to this problem. Also studied the classifications of sexual crimes that can significantly affect the correct qualification of these types of crimes.

Բանալի բառեր– *Սեռական անձեռնմխելիություն, սեռական ազատություն, սեռական հանցագործություններ, հասկացություն, դասակարգում, բնորոշում, սեռական հանցագործության օբյեկտ, սուբյեկտ, անչափահասներ:*
Ключевые слова: *Половая неприкосновенность, половая свобода, половые преступления, концепция, классификация, характеристика, объект сексуального преступления, субъект, несовершеннолетние.*
Key words: *Sexual inviolability, sexual freedom, sex crimes, definition, conception, classification, characteristic, object of sexual crime, subject, minors.*